


## ԼՈՒՅՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ և բարձր նախագահությամբ դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ երջանկահիշատակ Վազգեն Ա Շինարար Հայոց Հայրապետի մահվան 10-րդ տարելիցին նվիրված հուշ-երեկո, ինչն ամփոփումն ու բարձրակետն էր այն բոլոր հանդիսությունների, որոնք կազմակերպվել էին Մայր Հայաստանում և Սփյուռքում՝ ի հիշատակ հոգելույս Հայրապետի:

Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ մեծ համերգասրահը լեփ-լեցուն էր հանդիսականներով, ովքեր եկել էին իրենց սիրո բուրվառով ակնածանքի խունկը ծխելու Լույս Հայրապետի անմահ հիշատակին: Արվեստաշունչ հարկից ներս թևածում էր Վազգեն Ա Հայրապետի բարեշունչ ոգին: Հանդիսասրահում տեղադրված Վեհափառ Վազգեն Հայրապետի բարձրաղիր ու ծաղկազարդ պատկերն այնպիսի զգացում էր առաջ բերում, որ Հայոց Հայրապետի կենդանի ներկայությունն ենք վայելում՝ Վեհի վեհաշուք կեցվածքը, խաղաղ ու բարի հայացքը, իմաստածոր աչքերն ու երանավետ ժպիտը...

Նախքան հիշատակի հանդիսությունը, համերգասրահի նախասրահում ամեն ոք վերըստին բարեպատեհությունն ուներ ականջալուր լինելու լուսահոգի Վազգեն Վեհափառի քաղցր ձայնին ու սրտագին բարեմաղթանքին. «Թող Աստված օրհնի՛ մեր Սուրբ Եկեղեցին, թող Աստված օրհնի՛ համայն հայ հավատացյալ ժողովուրդը, թող Աստված օրհնի՛ մեր Մայր Հայրենիքը և մեր Հայրենի Պետությունը հավիտենական Հայաստանի»...

Հուշ-երեկոյին մասնակցում էին բազմաթիվ եկեղեցականներ, պետական ավագանու ներկայացուցիչներ, կրթության ու գիտության գործիչներ, հավատացյալներ և այլք:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո «Էջ Միածին ի Հոր» օրհներգի հնչյունների ներքո հանդիսասրահ բերվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Վազգեն Ա Հայրապետի մահվան 10-րդ տարելիցին: Հայրապետական Սրբատառ Կոնդակն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը: Այնուհետև Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ հնչեց Հայրապետական մաղթանքը, որի քաղցրալուր ելևէջները կարծես թե Երկնքից իջնում էին հուշիկ-հուշիկ՝ ի վերա Ամենայն Հայոց Հայրապետության աստվածային նախախնամության հովանին հյուսելով:

Այնուհետև ՀՀ նախագահի խորհրդական Սեյրան Ավագյանն ընթերցեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետևյալ ուղերձը երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի մահվան 10-րդ տարելիցի առիթով.

«Հարգելի հայրենակիցներ,

Համաժողովրդական սեր և ակնածանք վայելող Վազգեն Առաջինի հովվապետության 39 տարիները համընկան մեր ժողովրդի և Եկեղեցու համար բարդ և պատասխանատու ժամանակների: Նա իր ծավալած վերականգնողական, շինարարական, գիտակրթական և մշակութային մեծ գործունեությամբ այսօր դասվում է մեր պատմության վեհագույն կաթողիկոսների շարքին:

Հայությանն ուղղված Նրա իմաստուն ու հեռատես խորհուրդները, հորդորները մեր ժողովրդին օգնել են կողմնորոշվել և ուղղորդել են պետականության բացակայության և բարդ քաղաքական իրավիճակներում:

Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսն Իրենով մարմնավորեց մեր նորագույն պատմության մի ամբողջ դարաշրջան: Նրան էր բախտ վիճակվել օրհնել Հայաստանի անկախության հռչակումը: Խորհրդանշական է, որ Հայաստանի Հանրապետության նախագահը երդվում է «Վեհամոր» Ավետարանի վրա, որը Մատենադարանին է նվիրել Ինքը՝ Վազգեն Առաջինը:

Տասը տարվա հեռավորությունից ավելի հստակ է երևակվում Հայոց Հայրապետի մեծությունը»:

Լուսահոգի Հայրապետի կյանքի ու ծառայագործության, ինչպես նաև Երևանի Մաշտոցյան Մատենադարանի հանդեպ տածած Նրա հայրապետական հոգածությունը ներկայացնող խոսքով հանդես եկավ Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Սեն Արնշատյանը:

Այնուհետև հանդիսականները դիտեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» հեռուստաընկերության կողմից պատրաստված «Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս» վավերագրական ֆիլմը, որը հանդիսականների ներաշխարհում վերստին լուսագծեց Հայոց Հայրապետի կերպարը, հիրավի հուզեց ու կարոտի արցունքների ակունք բացեց...

Հուշ երեկոյի մասնակիցները հընթացս հանդիսության, ընդմիջմանը, համերգասրահի նախասրահում հնարավորություն ունեցան տեսնելու «Լույս Հայրապետ» խորագրով արխիվային լուսանկարների ու նյութերի ցուցադրությունը, որը կազմակերպվել էր Մայր Աթոռի Արխիվի կողմից՝ գործակցությամբ Հայաստանի Ազգային Արխիվի: Ցուցադրված լուսանկարները ներկայացնում էին հոգելույս Հայրապետի կենաց ժամանակագրությունը՝ մանկությունից մինչև Հայրապետություն: Ցուցադրվում էին նաև արխիվային այնպիսի վավերագրեր, որոնք իրենց բովանդակությամբ վկայում էին Հայոց Մեծ Հայրապետի խորագիտության, իմաստության, շրջահայացության, մտահոգությանց ու ապրած բերկրանքի մասին:

Երկնաբնակ Վազգեն Ա Շինարար Վեհափառ Հայրապետի հուշ-երեկոն ավարտվեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համատեղ համերգով: Ժողովրդական արտիստ, դիրիժոր-խմբավար Հովհաննես Չեքիջյանի հմուտ ղեկավարությամբ հնչեցին հայ և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Ավարտվում էր հուշ-երեկոն, սակայն համերգասրահից հեռացող հանդիսականների ներքաշխարհում չէր սրվերվում Լույս Հայրապետով ու Վեհի Լույս հիշատակով բացված արշալույսը:

Լույս, խունկ, մշտամմունջ աղոթք, խոնարհում և բյուր օրհնություն մեր սիրելի և անձկալի Հայոց Շինարար Հայրապետի սուրբ հիշատակին. ամեն:

Եղիցի, եղիցի և եղիցի:

*ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*